ԼՂԻՄ. ԱՆԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ Է ՄԻԱՅՆ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Արմենպրեսի թղթակիցը կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի երկրորդ քարտուղար Հրանտ **Մելքումյանին** խնդրեց համառոտակի պատմել Ստեփանակերտում ստեղծված իրադրության մասին:

— Լեռնային Ղարաբաղի շարունակվող շրջափակումը, անկասկած, բացասաբար է անդրադառնում քաղաքի էկոնոմիկայի վրա, որն, այսօր ցգնաժամային վիճակում է,— ասաց նա:— Չնայած այն բանին, որ այսօր աշխատում են մեր բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները, դրանց ապագան խիստ անորոշ է: Օրինակ, եթե ամենամոտ ժամանակներս էլեկտրատեխնիկական գործարանը ներկ չընտանա, ապա նրա աշխատավորական կոլեկտիվը արդեն հոկտեմբերի սկզբներին ստիպված կլինի պարապուրդ տալ: Նման վիճակ է սպասում նաև արդյունաբերության մյուս ձեռնարկություններին: Առանց այդ էլ տարեսկզբից օբյեկտիվ պատճառներով դրանք չեն թողարկել տասնյակ միլիոնավոր ռուբլիների արտադրանք:

Անհրաժեշտ նյութերի բացակայության պատճառով գրեթե դադարեցված է շինարարությունը: Իսկ թե էկոնոմիկայի ինչպիսի վնասների է հանգեցրել վառելիքի սուր պակասը, ասելն էլ ավելորդ է: Մեր երկաթուղային կայարանը երկար ժամանակ որևէ ժողովրդատնտեսական բեռ չի ստանում: Քաղաքի պարենավորումը շարունակվում է միայն օդային տրանսպորտով, զինծառայողների անմիջական մասնակցությամբ, որոնք այս գործում արժանի են գովասանքի: Բայց առջևում ձմեռ է, իսկ ավիացիայի հնարավորությունները տարվա այդ ժամանակահատվածում մեր պայմաններում խիստ սահմանափակ են: Ահա թե ինչու միայն ճանապարհների լիակատար ապաշրջափակումը կարող է ապահովել քաղաքի բնականոն կենսագործունեությունը, առողջացնել ռեգիոնի իրադրությունը:

Սակայն Ադրբեջանական ԽՍՀ-ն, շարունակեց Հ. Մելքումյանը, իր նպատակին հասնելու համար զինվելով ճնշման ուժային մեթոդներով, ուղղակի ասենք, չի շտապում վերացնել ԼՂԻՄ-ի շրջափակումը: Կասեմ ավելին. Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի նկատմամբ հանրապետության ներկայիս թշնամական գործողությունները ուղղված են բացառապես հայ ժողովրդի դեմ: Հակառակ դեպքում ինչով բացատրել, որ այս օրերին ինքնավար մարզի ադրբեջանական բնակավայրերը շինանյութերով և պարենով մեծ օգնություն են ստանում: Արդյոք դա չի՞ ապացուցում, որ ադրբեջանական կողմը երազում է ԼՂԻՄ-ը տեսնել առանց հայերի, նրանց ստիպելով հեռանալ իրենց նախնիների հողից: Ըստ երևույթին, ղարաբաղյան պրոբլեմի հենց այդպիսի լուծումն է ձեռնտու Ադրբեջանին:

Տարօրինակ է նաև իշխանության կենտրոնական մարմինների դիրքորոշումը, որոնք հանրապետության ագրեսիվ գործողությունների կասեցման վճռական միջոցներ չեն ձեռնարկում և չեն շտապում դրանց տալ քաղաքական գնահատական: Պետք է գիտակցել, որ անկանխատեսելի հետևանքների է հանգեցնում միայն անպատժելիությունը:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ